ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. ապրիլի 8-ից ապրիլի 24-ը ք. Պեկին (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Աղասի Աղայան - ՀՀ ՊԵԿ ԱՏԳՄՍՀ վարչության պետի տեղակալ

Սամվել Օհանյան - ՀՀ ՊԵԿ ԻՎ ՄԳ և ՄՍԻՊԸ բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Պեկին, ապրիլի 8-ից 24-ը

3. Հրավիրող կողմը՝

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առևտրի նախարարության Միջազգային բիզնես պաշտոնյաների ակադեմիա

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել ՉԺՀ առևտրի նախարարության Միջազգային բիզնես պաշտոնյաների ակադեմիայի նախաձեռնությամբ ս.թ. ապրիլի 8-ից 24-ն ընկած ժամանակահատվածում Պեկին քաղաքում անցկացվող «Մտավոր սեփականություն՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում Ասիայի և Եվրոպայի երկրների համար» խորագրով դասընթացին:

Դասընթացի շրջանակներում մասնակիցներն ծանոթացել են մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում գործող իրավական կառուցակարգերին, կիրառվող միջոցներին, ինչպես նաև քննարկվել են մտավոր սեփականության օբյեկտների գրանցման ժամանակ ՉԺՀ-ում կիրառվող չափանիշները, որոնք դասընթացի ընթացքում համեմատվել են մասնակից երկրներում, այդ թվում ՀՀ-ում կիրառվող ընթացակարգերին:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. ապրիլի 8-ից 24-ը կայացած «Մտավոր սեփականություն՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում Ասիայի և Եվրոպայի երկրների համար» խորագրով դասընթացին, ինչպես նաև հաջորդող արտաօրակարգային հանդիպումներին քննարկվել են հետևյալ թեմաները.

- ՉԺՀ-ում գործող իրավական կառուցակարգերի և չինական եղանակով իրականացվող արդիականացման առանձնահատկությունները,
- Պետության կառավարման վերաբերյալ Չինաստանի ղեկավարների ուսմունքների և մոտեցումների վերլուծություն,
- Մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում ՉԺՀ-ում գործող իրավական ինստիտուտների առանձնահատկությունների վերհանում,
- Մտավոր սեփականության պաշտպանության ուղղությամբ ՉԺՀ մասնավոր իրավաբանական ընկերությունների կողմից մատուցվող իրավաբանական ծառայությունների առանձնահատկությունների ուսումնասիրում՝ տվյալ ընկերություններ կատարված այցերի շրջանակներում,
- Կեղծված ապրանքների շրջանառության դեմ ՉԺՀ-ում կիրառվող միջոցառումների վերլուծություն,
- Մի շարք հանրահայտ ապրանքային նշանների իրավատերերի իրավունքների՝ ՉԺՀ դատարանների կողմից իրականացված պաշտպանության վերաբերյալ դատական գործերի ուսումնասիրում,
- Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների միջազգային պաշտպանության իրականացման առանձնահատկությունների վերլուծություն և «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» երկրների միջև համագործակցության մակարդակի բարձրացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՉԺՀ-ում անցկացվող միջոցառմանը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում մասնակցել են Միջին Ասիայի երկրների՝ Ղրղզստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Թուրքմենստան ներկայացուցիչներ, Պեկինի համալսարանի պրոֆեսորներ, մասնավոր իրավաբանական ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Պեկինի համալսարանում դասավանդող ԱՄՆ տարբեր համալսարանների դասախոսներ:

Միջոցառման շրջանակում կազմակերպված պանելային քննարկումների և հանդիպումների ընթացքում մասնակիցները քննարկել են մտավոր սեփականության պաշտպանության ուղղությամբ իրականացվող միջոցառումները, դրանց արդիականացումը և կեղծված ապրանքների դեմ պայքարի անհրաժեշտությունը:

Պանելային քննարկումներից երկուսին հանդես է եկել նաև ՀՀ պատվիրակը՝ ներկայացնելով մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում ՀՀ-ում իրականցվող միջոցառումներ և գործող իրավական կառուցակարգերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ ՊԵԿ կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ ոլորտային քննարկումների անցկացումը, մասնավորապես, մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում արդիական և նորարարական մեխանիզմների ներդրման համատեքստում:

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աղասի Աղայան

Սամվել Օհանյան

28.04.2025թ